— Այսոամենայնիւ, մենք պէտք է բաժանուենք միմեանցից:

— Այո՛ , պէտք է բաժանուենք...

Նրա ձայնը դողաց:

Վերջին օրերում ես այն աստիճան սկսել էի սիրել եւ յարգել այդ ազնիւ երիտասարդին, որ, կարծես, մի բան կտրուեցաւ իմ սրտից, երբ լսեցի, որ բաժանուելու ենք միմեանցից եւ գուցէ այլեւս չէինք տեսնի միմեանց: Ես սկսեցի աղաչել նրան.

— Գոնէ այս գիշեր մնացէք մեզ մօտ:

— Մեծ ուրախութեամբ կը մնայի, եթէ կարելի լիներ...

Յետոյ խօսքը փոխեց.

— Բայց դուք էլ երկար չէք մնալու այստեղ:

Ասլանը, որ լուռ դիտում էր մեր սրտերի զեղմունքը, աւելի տխրեցրեց ինձ, ասելով.

— Մի քանի ժամից յետոյ մենք պէտք է թողնենք այդ քաղաքը:

— Գիշերո՞վ:

— Այո՛, գիշերով:

Ի՞նչ էր պատահել, ի՞նչ յարկ կար այդպէս շտապելու: Նրանք ինձ ոչինչ չասացին: Միայն նկատում էի, որ Ասլանը նոյնպէս մի առանձին թախծութեան մէջ էր գտնուում: Երեւի, սիրելի ընկերից բաժանուիլը նրան եւս տանջում էր:

Հասաւ բաժանման ծանր րոպէն: Ջալլադը մօտեցաւ նախ Ասլանին, գրկեց նրան: Ոչինչ չխօսեցին, ոչինչ չասացին միմեանց: Երկար, լուռ գրկախառնութեան մէջ էին գտնուում նրանք: Մէկի գլուխը դրած էր միւսի ուսի վրայ: Մէկի ձեռքերը փաթաթուած էին միւսի պարանոցին: Չէին խօսում, բայց լռութեան մէջ շատ բան էին ասում միմեանց:

Ա՜խ, որքա՜ն վսեմ, որքա՜ն բարձր բան է ճշմարիտ բարեկամութիւնը: Որքա՜ն հոգու եւ զգացմունքների սրբութիւն կայ նրա մէջ: Այդ բոլորը տեսնելով, իմ սիրտը նոյնպէս լցուում էր մի սրբազան ջերմութեամբ, իմ զգացմունքները նոյնպէս ազնուանում էին:

Նա թողեց Ասլանին եւ մօտեցաւ ինձ: Կարօյից բաժանուելու ժամանակ ես լաց չեղայ, բայց երբ նրա դողդոջուն ձեռքերը փաթաթուեցան իմ պարասոցին, ես չկարողացայ զսպել իմ արտասուքը: Նա նոյնպէս յուզուած էր, նրա հեզ, հրեշտակային աչքերը նոյնպէս ծփում էին: